ՆՈՐ-ԴԱՐ

№ 64 ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 18 Ապրիլի 1897 Շաբաթ 18 Ապրիլի ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 64

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 5 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

Կիրակի, ամսոյս 20-ին, հանգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄՈՒԹԱՓԵԱՆՑԻ

մահուան քառասունքին Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում կկատարուի հոգեհանգիստ։

Ս. պատարագը կսկսուի առաւօտեան 10 ժամին իսկ հոգեհանգիստը 11 ժամին։

(754) 1 1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ծանուցանում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ համաձայն Թիֆլիսի նահանգի քաղաքային գործերի վերաբերեալ ատեանի ապրիլի 8-ին ներկայ թուականիս արած որոշման համաձայն, ցանկացողները կարող են ամեն օր ստանալ քաղաքային վարչութեան գրասենեակում Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամների վերջնական ընտրողական ցուցակները առաջիկայ 1897—1901 թուականների քառամեակի համար։

(752) 3—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Յոյն-թիւրքական պատերազմը։
Քրոնիկոն—Լուրեր։
Կ-Պոլսի հայ թերթերից։
Նամակներ Մոսկուայից—I. Բժշկական գործիչների համառուսական ժողովը։
Թղթակցութիւններ.—Հայ-գիւղերից. Աղեստա։
Քաղաքական.—Քաղաքական դրութիւնը։ Քաղաքական լուրեր։
Հեռագրեր։
Թեր և դէմ։
Բանասիրական.—Գիտական շարժում։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 18 ապրիլի 1897 թ.։

ՅՈՅՆ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմի դաշտից վերջին օրս մի նշանաւոր և դրութիւնը վճռող հեռագիր չէ ստացուած։

Մայրաքաղաքից և արտասահմանից ստացուած թերթերի վերջին համարները հաղորդում են միայն տեղի ունեցած և արդէն հեռագրով մեզ յայտնի պատերազմների մանրամասնութիւնները։ Եւ, ինչպէս անցեալ անգամ ասացինք, յունական թերթերը չափազանցնում են նկարագրել յոյների տարած յաղթութիւնները։

Երևում է, որ թիւրքական զօրքերի հրամանատար Էդհեմ-փաշան Լարիսան գրաւելուց առաջ վճռական և խիստ կատաղի կռիւ է մղել Միլունի անցքում, որով և բացուել է նրա առաջ Լարիսա տանող ճանապարհը։ Յոյները Միլունի անցքում հերոսաբար կռուել են թիւրքերի դէմ, բայց թիւրքերը կաւի բալէնիքին սահմանին են մնացել և թիւրքական ամբողջ զօրքը մեծ վնասներ է հասցրել յոյներին, պատերազմը այնքան կատաղի է եղել, որ կռիւը միայն այն ժամանակն է վերջացել երբ երկու կողմն էլ յոգնածութիւնից ուժասպառ են եղել։ Էդհեմ-փաշան անձամբ կռուի մէջ մնացած, իր հրամանները գրելիս է եղել արիւնոտ կտոր-կտոր թղթերի վրայ։

Լարիսայում թիւրքը ամրանալով Ալա-Թեսալիայի տէր է դարձել։ Եւ ճշտուի այն հեռագրական լուրը թէ, Աթէնքում ամբոխը գրգռուած զէնքի պահեստները աւերում և զէնքերը յափշտակում է և թէ Դելիանիսի մինիստրութիւնը ընկնում է, նշանակում է, որ Յունաստանի համար պատերազմը բոլորովին անյաջող ընթացք է ստացել։

Օսման-փաշայի պատերազմի դաշտը մեկնելու մասին այլևս ոչ մի լուր չէ ստացւում, թէպէտև ստացել էինք տեղեկութիւն, որ Էդհեմ-փաշան յետ է կոչւում, Պլևնայից յայտնի Օսման-փաշան, թիւրքական զօրքերի գլխաւոր հրամանատար է նշանակւում։

Այդ մասին թիւրքերի հակառակ կողմից էլ ոչ մի լուր չէ ստացւում. դա ապացոյց է, որ Ելդըզ-Քէօշկում գոհ են Էդհեմ-փաշայից. սուլթանը նրան շքանշան էլ ուղարկեց։

Սպասում էր, որ Բալկանեան միւս քրիստոնեայ ժողովուրդները ոտքի կկանգնեն, գլխաւորապէս Մակեդոնիան կապստամբէ, որ անշուշտ մեծ օգնութիւն կլինէր յոյների համար, բայց այդ հաշիւն էլ սխալ յայտնուեց։

Այսուհետև Յունաստանը այդ կողմից, ինչպէս և Սերբիայից, Բուլղարիայից օգնութիւն չի կարող սպասել։ Սերբիան. Բուլղարիան այնքան էլ չեն տաքանում Յունաստանի համար, նրանք իրենց հաշիւներն ունեն, եթէ յոյնը աջողութիւն ունենար, հաւանական է, որ դրանք ոտքի կանգնէին, բայց ոչ թէ յոյներին օգնելու, այլ թիւրքերի նեղ դրութիւնը շահագործելու իրենց օգտին։

Յոյն-թիւրքական պատերազմը չի կարող արևելեան խնդիրը յարուցանել և այլևս երկիւղ չկայ, որ Բալկանեան թերակղզու վրայ ապստամբութիւն ծագի. և եթէ ծագելու էլ լինի, չի կարող դա ընդհանրանալ և ընդհանուր խաղաղութիւնը խանգարել, դրան գրաւականը Աւստրիա-Ունգարիայի կայսր Ֆրանց-Յոզէֆի Պետերբուրգ արած այցելութիւնն է։

Նորին Մեծութիւն Կայսր Նիկոլայի իր մեծ հիւրին ասած խօսքերից իմացաւ աշխարհը որ արևելքի վերաբերութեամբ Ռուսիան և Աւստրօ-Ունգարիան համաձայնութեամբ են գործում։ Իսկ Բալկանեան փոքրիկ տէրութիւնները, յայտնի է որ առանձնապէս ենթարկուած են Աւստրիա-Ունգարիայի և Ռուսիայի քաղաքականութեան։

Երբ այդ երկու մեծ պետութիւնները Բալկանի վերաբերութեամբ համաձայնութեամբ են գործում, էլ ապստամբութիւններ սարքելու տեղ չէ մնում, մանաւանդ որ Գերմանիան և դրա հետ էլ Իտալիան չէ չեն ասել այն համաձայնութեան, որ կնքեցին իրենց մէջ Ռուսիան և Աւստրիա-Ունգարիան արևելքի վերաբերութեամբ։

Բոլոր հանգամանքներն ի նկատի առնելով, մենք պատերազմը վերջացած ենք համարում և այսուհետև մարդկանց կոտորածը—ապարդիւն։

Յոյնը յաղթող չէ, որ իր նպատակին հասնի, իսկ թիւրքը յաղթելուց յետոյ ոչինչ չունի ստանալու։

ՔՐՈՆԻԿՈՆ

Գանձակից մեզ հետևեալ գազանային դէպքն են հաղորդում։

Գանձակից քառասուն հոգի հայ մշակներ զատկական տօների առթիւ գնում էին իրենց գիւղը, Գետաբէկից դէպի Դէօզչայ տանող ճանապարհին, Ղալաքենդ գիւղից բաւական հեռու հանդիպում են երեք սպառազինուած թիւրքերի։ Սրանք հարցնում են հայերին, թէ ո՞ր գիւղացի են. հայ մշակները պատասխանում են, թէ Բասարկեչարցի են։ «Մենք էլ հենց ձեզ էինք փնտրում,—ասում են թիւրքերը.—ձեր համագիւղացիները մեր գիւղացի մի թուրք են սպանել, ուստի նրա արիւնը ձեզնից պիտի պահանջենք»։ Հայերի մօտ զէնք չի լինում. թիւրքերը ոչխարի պէս մորթոտում են նրանցից տասնհինգ հոգու ու հեռանում։ Մօտակայ թուրք գիւղի տանուտէրին աջողւում է աւազակներից երկսին բռնել, իսկ միւսը չի երևում. հաւանական են համարում, որ նա հայերից սպանուած լինի։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան կազմած ընտրողների վերջնական ցուցակից երևում է, որ ընտրողների ընդհանուր թիւը հասնում է 2,854-ի։ Իրաւասուների ընտրութիւնը նշանակուած է մայիսի 18-ին քաղաքային վարչութիւնը մինչև մայիսի 9-ը ընդունում է ընտրողներից առաջարկուած թեկնածուների ցուցակներ։ Ընտրութիւններին վերաբերեալ տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ քաղ. վարչութեան դիւանատնից։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստր Ա. Ս. Երմոլովը, լուսաւորութեան մինիստր գրաֆ. Ի. Դ. Դելեանովը, ճանապարհների հաղորդակցութեան մինիստր իշխան Մ. Ի. Խիլկովը և Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Ս. Գոլիցինը ընդունել են Պետերբուրգում առաջիկայում բացուելիք երկրագիտական միջազգային կոնգրեսի պատուաւոր անդամի կոչումը։

—

Գ. Արշակ Չօպանեան ուղարկել է մեզ Պարիզից «L'armeme son histoire sa litterature, son role en Orient» (Հայաստանը, նրա պատմութիւնը, նրա գրականութիւնը և նրա դերը արևելքում) խորագիրը կրող աշխատութիւնը։ Պարիզում տպուած այդ գրքին կցած է ֆրանսիական ակադեմիայի անդամ Անատոլ Ֆրանսի յառաջաբանը, որ խօսել է մարտի (ն. տ.) 9-ին աշխարհա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Մնացած ցեղի կենդանիներ. Հետաքրքիր գիւտ—նախամարդը։ Կարելի չէ մարդկանց հասակը մեծացնել։ Երբ է մարդս ամենաուժով ժամանակը։

Երկրի զանազան մասերում կամ պատահաբար և կամ թէ յատկապէս կատարուած պեղումների միջոցին յաճախ գտել են այնպիսի բոյսերի ու կենդանիների մնացորդներ, որոնք ներկայումս երկրագնդիս երեսին ոչ մի տեղ յայտնի չեն։ Սակայն այդ գիւտերի մէջ աւելի հետաքրքրականն այն կենդանիների կմախքներն են, որոնք մի քանի կենդանիների յատկութիւններն ու կազմութիւնն են ունեցել։ Այսպէս օրինակ Մաստոդոնզաւր կոչուած կենդանին իր կազմութեամբ և ձևով նման է գորտի, ատամներով—կոկորդիլոսի, վզի անդքով—մողէսի. Նրա մարմինը մերկ է եղել, կուրծքն ու վիզը պատեանով պատած։ Իխտեօզաւրը ընդհանրապէս նման է սողուններին, իսկ արտաքին ձևով և մի քանի նշաններով—ձկան։ Բելոդինը—նման է կոկորդիլոսի և մողէսի։ Այդ միջոցին եղել են նաև օձանման մողէսները մօտ 100 ոտնաչափային ողերով, զանազան դինոզաւրներ, որոնք նման են եղել մողէսի, կոկորդիլոսի և կաթնասունների, թռչունների, արխէօպտերիկսները, որոնք առաւնաւոր թռչուններ են և թևերի վրայ ունին մատներ ու մագիլներ, նման են թէ թռչունների և թէ սողունների։ Եղել են նաև ուրիշ դարաշրջաններում և ուրիշ կենդանիներ, ինչպէս Պալէօտերիում, որ նման է ռնգեղջիւրի և տապիրի. անոպլոտերիումը, որ նման է որոճող կենդանիների ու խոզերի. տոքսոդոնը, որ նմանութիւն ունի զանազան կողմերով ռնգեղջիւրի, բեհեմոտի, կրծողների, թերատամների, դելֆինների, փղի։

*

Այսպէսով ընթերցողը տեսնում է, որ երկրի կեանքի զանազան շրջաններում գոյութիւն են ունեցել զանազան կենդանիներ, որոնք մի տեսակ անցողական կազմ են ունեցել մի տեսակ կենդանուց միւսը փոխարկուելու համար, ուրիշ խօսքով դրանք իրենց մարմնակազմի մէջ ունեցել են այնպիսի կողմեր, որոնցից, ոմանք յատուկ են իրենցից ստոր կենդանիներին, իսկ միւսները—աւելի բարձր կենդանիներին։ Դրանք հաւաքական տիպարներ են։

Մինչև այժմ դեռ հաստատապէս կարելի չէ ասել, թէ ո՞րն է եղել մարդու համար հաւաքական տիպարը, այսինքն այն դրութիւնը, երբ մարդը կենդանական վիճակից մարդու է դառնում։ Սակայն դոկտոր Դիւբուայի գիւտը կարծես թէ փոքր ինչ լոյս է սփռում նաև այդ խնդրի վրայ։

Դոկտոր Դիւբուան զինուորական է և 1890—1895 թիւը պեղումներ կատարելով Յաւա կղզու վրայ Տրենիլի մօտակայքը, գտել է մի քանի ոսկորներ, որոնք թէև բաւական թերատ են, բայց և այնպէս կարծել են տալիս, թէ դրանք նախամարդու ոսկոր պէտք է լինին, այսինքն այն կենդանու, որ դեռ մարդ չէ դարձել, բայց անասնական վիճակից էլ դուրս է գալիս։

Գտնուածը մի թերատ գանգ է, երկու սեղանատամ, և կոնքի ոսկր։ Որքան էլ թերի, բայց և այնպէս կարելի է այդ ոսկրներից եզրակացնել գանգից—նրա զարգացման աստիճանը, ատամներից—նրա գործածած կերակուրը, կոնքի ոսկրից նրա մարմնի դիրքի, ման գալու եղանակի մասին։

Անցեալ տարուայ յունուարին Մանուվրիէն այդ առթիւ մի մանրամասն զեկուցումն է ներկայացրել Պարիզի մարդաբանական ընկերութեանը, նա ենթադրելով, որ այդ ոսկրները մի անհատի են պատկանում, կարծում է, որ դա պէտք է լինի կամ միջին դրութիւնը մարդու և քառաձեռնեայ կենդանիների միջև, և կամ իր ցեղի մէջ եղած մի իդիոտի։ Բեռլինի մարդաբանական ընկերութեան անդամներից ոմանք կոնքի ոսկրը մարդկային են համարում, գանգը— մարդակերպ կապկի. իսկ միւս մասը—երկու ոսկրներն էլ մարդկային են համարում։ Անգլիայում շատ գիտականներ կարծում են, որ այդ ոսկրների տէրը քառաձեռնեաններից չէ եղել, և մինչդեռ Բեռլինում հակառակն են կարծում։

Ընդհանուր եզրակացութիւնն այն է, որ երկրագնդի կեանքի մէջ յայտնի սառցային կոչուած շրջանում Յաւա կղզու վրայ ապրելիս է եղել մի տեսակ կենդանի, որ մարմնին ուղղահայեաց ձև տուած է ման գալիս եղել իր ետևի երկու ոտների վրայ. այդ կենդանիների գանգի և ուղեղի զարգացումից երևում է. որ դրանք բռնել են քառաձեռնեայ կենդանիների ու մարդկանց մէջ տեղը։ Այդ տիպին Դիւբուան կոչում է Pithecanthropus erectus.

գրութեան ընկերութեան դահլիճում պ. Ա. Չօպանեանի դասախօսութեան միջոցին, որ ամփոփուած է վերոյիշեալ գրքում և կազմում է գրքի բովանդակութիւնը։ Խօսելով նոյնպէս արդի գրականութեան և գործիչների և նրանց գործունէութեան մասին, պ. Չօպանեանը իրեն հաւանած գործիչին իւր սիրած գոյներով է ներկայացնում։

—

Ալեքսայի յանկաց ընդհանուր հիւպատոսարանին յոյն և ռուս կանայք առաջարկել են իրենց ծառայութիւնը, ի բուժ գթութեան քոյրեր, մտնելու յանկաց Կարմիր Խաչի ընկերութեան մէջ։ Հիւպատոսարանը, Ալեքսայի թերթերի ասելով, այդ մասին կարգադրութիւն է սպասում իւր կառավարութիւնից։

—

Միջնակարգ դպրոցների աշակերտներին, մայրաքաղաքի թերթերի ասելով, յայտարարուած է ուսումնարանական բարձր իշխանութեան մի կարգադրութիւնը, որով նրանք երեկոյեան ժամը 9 ից չպիտի երեւան փողոցներում մինչև մայիսի 1-ը, իսկ մայիսի 1 ից մինչև օգոստոսի 15 ը նրանց թոյլ է տրւում փողոցներում ման գալ երեկոյեան մինչև ժամը 10 ը։ Ուշ ժամանակ յիշեալ աշակերտները փողոց կարող են դուրս գալ միմիայն իրենց ծնողների կամ նրանց փոխարինողների հետ։

—

Մենք ստացել ենք հետեւեալ նորագոյն հրատարակութիւնները.

1) «Աղուէս և նապաստակի գրազը», հեքեաթ։ Դա մանկական գրադարանի համար այն մի շարք գրքոյկներից է, որոնց հրատարակութեանը վերջերս ձեռնարկել է Թիֆլ. Հայոց Հրատ. Ընկերութիւնը։ Գրքոյկը զարդարուած է գունաւոր պատկերներով, տպուած է Թիֆլիսում 1897 թ., գինը 40 կ. է։

2) Քամալեանց Ս.—«Հողածին և անմեռ աշխարքը»։ Սա էլ հեքեաթ է, 28 էջից բաղկացած. գինը 8 կ. է։ Տպուած է Թիֆլիսում 1897 թուին։

—

Մեզ խնդրում են հրատարակել հետեւալը.

Կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի հովանաւորութեան տակ գտնուած կոյրերի խնամակալ հոգաբարձութեան Կովկասի ճիւղի խորհուրդը պատիւ ունի յայտարարել ի գիտութիւն ընդհանրութեան, որ առ 1 մարտի 1897 թ. ճիւղի դրամարկղում կար 35,542 ր. 78 կ., մարտի ընթացքում մուտք եղել է 5,651 ր. 86 կ., միևնոյն ամսում ծախսուել է 2,120 ր.։ Առ 1 ն ապրիլի մնում էր 39,074 ր. 64 կ.։ Այդ գումարից գտնւում է 1) ընթացիկ հաշւում պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքում 6,063 ր. 93 կ., 2) տոկոսաբեր թղթերով պահւում է նոյն տեղում 31,129 ր. 72 կ., 3) բանկի միևնոյն բաժանմունքի խնայողական գանձարանում 1,879 ր. 7 կ. և 4) ճիւղի դրամարկղում առձեռն 10 ր. 92 կ.։

Ճիւղի ակնաբուժարանում 1897 թ. մարտ ամսին նոր հիւանդ եղել է 446 հոգի և դրանք հների հետ միասին այցելել են 2,337 անգամ, միևնոյն ժամանակում անդամահատութեան են ենթարկուել 63 հիւանդներ, որոնցից 30 ը գիշերօթիկ և 33-ը երթևեկ էին։

—

ՎՐԻՊԱԿ. «Նոր-Դար» ի նախընթաց համարում № 63 առաջնորդողի մէջ տպուել է 3-րդ սիւնեակում մի խոշոր սխալ, լոյս է տեսել, «ազգամփրական տեսակէտից..», պէտք է կարդալ. «ազգամոլիտական տեսակէտից...»։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԴՈՆՁՈՂԻՑ.—Օրերս հետեւեալ ցաւալի դէպքը պատահեց տեղս։ Տեղւոյս արհեստաւորաց դպ. ամենայարգուած ուսուցիչներից մէկը, Զուլէզի պ. Բաղդասարեան, ապրիլի 7 ին, Աւետեաց տօնին գնում է ս. Լուսաւորիչ եկեղեցին, հաղորդուելու համար. պատարագի սկզբից մինչև վերջը նա ինքն իրեն բարձր ձայնով աղօթելիս. չորեքս է եղել, բայց ժողովուրդը շատ տեսած լինելով այդ մարդուն եկեղեցու մէջ, ուշ չի դարձնում նրա արարքներին։ Պատարագը վերջանալիս ուսուցիչը բակում է վայր ընկնել և բարձր ձայներ հանել. խելագարութեան նշաններ են յայտնւում։ Թշուառին մի կերպ տուն են հասցնում։ Տանը մինչև հետեւեալ առաւօտ իրեն լաւ է պահում, բայց հետեւեալ օրերը կատարեալ ցնորուածի դրութիւնն է ցոյց տալիս։ Տանում են Թիֆլիս. բայց այնտեղի հիւանդանոցում պարապ տեղ չլինելու պատճառաւ կրկին տեղս են բերել։ Այժմս թշուառի կանայք կապած մի կերպ պահում է նրա թշուառ կինը։ Որդիք չունի, ասում են որ շատ մտածելուց է այդ հիւանդութիւնը առաջել։

—

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Ամպամած օդերը շարունակւում են. գիշերները սակաւ բացառութեամբ, անձրև է տեղում. ցուրտը մասամբ վնասել է պտղատու ծառերին. եթէ այսպէս շարունակուի ծառերի ուշացած կոկոնները բոլորովին ցրտատար կըլինին։

Խնդրում ենք նրանցից, որոնց մօտ գտնւում են խմբագրութեան հասանելի գումարներ և որոնց վրայ .... են մնում, բարեհաճեն ուղարկել խմբագրութեան։

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

Նախապէս գրած էինք թէ Վ.Ա., սուլթանը բարեհաճեցաւ երկու տարուան զինուորական տուրքէ զերծ կացուցանել Անատոլուի հայերը։ Բարձր. Մեծ Եպարքոսն Կայս. այս Իրատէն հաղորդեց Անատոլուի կուսակալներուն։ Դիարպէքիրի Պատրիարքական փոխանորդն երբ այս լուրը առաւ, տեղւոյն երեւելիները գումարելով տեղւոյն եկեղեցւոյն մէջ գոհաբանական աղօթքներ կատարեց Վ.Ա. Սուլթանի արեւշատութեան համար։

—Ս. [illegible] Հայրն երկու շրջաբերական գրեց գաւառներն, որոցմէ մէկովն կ'աւետէ քաղաքական յանցաւոր գեւ բանտը մնացողներուն ներման արժանանալն և միւսովն կը ծանուցանէ թէ Կայս. Իրատէի մը համաձայն երկու տարի զինուորական, տուրքէ զերծ պիտի մնան գաւառներու բնակիչները։

—Հինգշաբթի օր, ըստ սովորութեան հինգ բանտարկեալ Պատրիարքարան դրկուեցան, ուր օրինական ձեւակերպութեանց կատարումէն յետոյ ազատ արձակուեցան։

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՈՒԱՅԻՑ

I.

ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԸ [1]

—

Հետեւեալ օրը, մարտի 12-ին, առաւօտեան նիստին ժողովի պարապմունքն էր մեծ պասին և տօների յաւուրքին տրուելիք ներկայացումների թոյլտւութիւնն ստանալու խնդիրը։ Այս հարցի մասին երկու զեկուցում էր տրուած. ժողովը որոշեց, վերացնել մեծ պասին և Վերափոխման պասին ներկայացումների արգելումը։ Ինչէս և տօների նախընթաց գիշերների ներկայացումների արգելքը։ Ժողովի քարտուղար պ. Ա. Կրեմլև կարդաց իւր զեկուցումը թատրոնի, որպէս հասարակական հաստատութեան դրութեան մասին։ Պարոնն ասում էր, որ չպէտք է ոչ մի ճնշում կրէ թատրոնական գործը և անհրաժեշտ է հիմնել նոր մինիստրութիւն—գեղարուեստից[2]։ Սրանից յետոյ կարդացուեց և Մախիմովի զեկուցումը, որի մէջ մի նոր բան չկար։ «Նոր-Դար»-ի սուղ էջերը չեն ներում մեզ ամեն մի զեկուցման մասին մանրամասնօրէն խօսելու համար անցնենք հետաքրքրութեան արժանի խոշոր խնդիրների լուծման ու իւրերի դրութեան համառօտ արձանագրութեան։ Ասենք, որ ժողովի ծրագիրը բաժանուած էր չորս մասի։ Երկրորդը բացուեց Ա. Մալչանովի նախագահութեամբ։ Այս մասի նիստերում էլ շատ խնդիրներ յարուցուեցան և որոշում ստացան։ Այդ օրուայ նիստում քննուեց մի խումբ մարդկանց կազմած պայմանների և կանոնների մի ծրագիր, որը բաժանւում է 5 մասի. 1) թատրոնատէրերի (անտրեպրենիօրների) և առհասարակ թատրոնական տեսչութիւնների ու ընկերութիւնների համար. 2) ռեժիսեօրների մասին. 3) Դերասան և դերասանուհիների մասին. 4. Օրկէստրի և երգչիկ խմբերի համար. 5) տուգանքների ծրագիրն ընդունուեց միաձայն։ Այս ծրագիրը կազմող յանձնաժողովը ժողովին առաջարկեց միջնորդել կառավարութիւնից թոյլտւութիւն ստանալ բեմական գործիչների մէջ միաբանական կապ հաստատելու։

Ցետոյ փոխ-նախագահ պ. Լաւրով-Արլովսկի մի համառօտ ճառ խօսեց, որով շատ պարզ նկարագրեց իւրերի խակական դրութիւնը։

Հետեւեալ օրը ժողովը կրկին աչք է անցրել թատրոնատէրերի վերաբերեալ կանոնները, որոնց 25 կէտերից ընդունեց 20-ը, միւս 5-ը, որոնց մէջ բենեֆիսի հարցն էր, թողեց հետեւեալ նիստին։ Ամեն ինչ խիստ ամեն ինչ օրինաւոր, պայմանագրեով, թատրոնական ընկերութիւնից հաստատուած—ահա ընդունուած կէտերի ընդհանուր բնաւորութիւնը։ Ոչ թատրոնատէրը կարողանայ դերասաններին ծառայեցնել իւր կապրիզներին օգտուելով նրա կարօտեալ վիճակից, ոչ էլ դերասանները կարողանան խաղեր խաղալ նրանց գլխին։ Ցետոյ նշանակուած է տուգանքի կանոնները խանգարողների համար յօգուտ թատրոնական ֆոնդի։ Ժողովի երկրորդ մասի վերջին նիստն էլ միացուեց, նախագահին ծափահարելուց յետոյ։

Չորս բաժնից երկուսը վերջացել էր, բայց շատ խնդիրներ դեռ սպասում էին լուսաբանութեան։ Մարտի 19-ին, պ. Կարպովի նախագահութեամբ օրուայ ժամը 12-ից սկսուեց III մասի նիստը։ Փոխ նախագահ ընտրուեց Ն. Ն. Սոլովցեւ։

Մի բան, որ կարելի է նոր համարել այս նիստում, դա Ն. Դ. Տիմկովսկու զեկուցումն էր «Հասարակութեան մասին»։ Իւր զեկուցագրի մէջ պարոնը յարձակւում է հասարակութեան վրայ, ասելով, որ ժողովուրդը, թատրոն յաճախող հասարակութիւնն էլ չի հասկանում թատրոնի նշանակութիւնը։ «Ձասերը խօսեցին դերասանների, պիեսների մասին,—շարունակում է զեկուցանողը,—բայց ոչ մէկը չխօսեց հանդիսականների մասին։ Ներկայումս ինտելիգենտ կոչուող մարդը գեղարուեստից շատ քիչ բան է հասկանում ընդհանրապէս, և թատրոնից մանաւանդ»։ Բաւական երկար խօսելուց յետոյ առաջարկում է պարոնը նոր թատրոն հիմնել—ճարտարապետ Շեխտելի ծրագրով, դրա ժողովրդի գեղարուեստական ճաշակը զարգացնելու և կիրակնօրեայ ընթերցանութեան համար։

Ցետոյ կարդացին իրենց զեկուցումները Գ. Բուրժուլով - գիւղական թատրոնների մասին, Փ. Դանիլով—ժողովրդական զուարճութիւնների մասին։ Վերջինս ցանկութիւն է յայտնում տօնավաճառներում և հրապարակներում էժանագին ներկայացումներ սարքելու, օրինակ բերելով Պենզայում տրուած այդպիսի ներկայացումների յաջողութիւնը։

Վերջում էլի կարդացին հետեւեալ մարդկանց զեկուցումները, պ. պ. Նիկուլինի, Ըֆտարոսլաւսկու, Գուվարգինի և մի քանի դերասանների։

Հետեւեալ օրը շարունակւում էր նոյն նիստը պ. Կարպովի նախագահութեամբ։ Գ. Պանին ցանկութիւն յայտնեց, որ քաղաքային վարչութիւններին իրենց հսկողութեան տակ առնեն թատրոնները, որը կընպաստէ գեղարուեստի առաջադիմութեան, դերասանների ու հասարակութեան շահերին։ Ցետոյ նախորդ օրուայ հարցերի մասին հետեւեալ որոշումները կայացան։

Ա. Քաղաքային ու գաւառական թատրոնը. Լսելով մի ամբողջ շարք զեկուցումներ քաղաքական ու գաւառական թատրոնի բարելաւութեան մասին, ժողովը անպայման ցանկալի է համարում, որ քաղաքային վարչութիւններն իրենց ձեռքն առնեն թատրոնը, կրթուած ու գեղարուեստից հասկացող մարդկանց յանձնելով ռեժիսօրի պաշտօնը։

Բ. Թատրոնի հանրամատչելի դարձնելու հարցը։ Հիմնուելով բազմաթիւ յայտարարութիւնների և զեկուցումների վրայ, ժողովը հասաւ հետեւեալ եզրակացութեան. պէտք է ժողովրդական թատրոններ հիմնուեն կարելոյն չափ էժան գներով մատչելի դարձնելու հասարակութեան. Մոսկուայում ցանկալի է, այդպիսի մի հասարակական թատրոն կառուցել Աստրովսկու ծրագրով և Ալէքսանդր Գ. Կայսեր յանկութեան համաձայն։ Բացի այս ժողովը ցանկալի է համարում, որ հանրամատչելի թատրոնը հիմնուի հետեւեալ սկզբունքներով. ա) քաղաքը ինքը պահպանի թատրոնը, բ) թատրոնը լինի զուտ ժողովրդական, գ) ծառայի գեղարուեստին և ոչ զուարճութեան։ Եւ ամեն տեղ ժողովրդին մատչելի անելու համար այժմ

---

[1] Տես «Նոր-Դար» № 63.

[2] Ռուսիայում, ինչպէս յայտնի է, այդպիսի մինիստրութիւն չկայ. այժմ հարց է ծագում հիմնել գեղարուեստից մինիստրութիւն [министерство изящныхъ искусствъ]։ Ուրեմն եթէ հաստատուի այդ բանը, նրա իրաւասութեան տակ կըմտնի ամբողջ գեղարուեստական գործը—երգ-երաժշտութիւն, թատրոն, նկարչութիւն, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն։

---

* * *

Ընդհանուր տարածուած կարծիք է, թէ նախկին ժամանակներում մարդիկ աւելի առողջակազմ և հսկայամարմին են եղել։ Ճիշտ է արդեօք այդ կարծիքը—դրա մասին՞ չէ մեր խօսքը, այլ թէ կարելի չէ՞ այնպէս անել, որ մարդկանց հասակն աւելի մեծ լինի և ամրակազմ։ Բոյսեր արհեստական խնամատարութեան շնորհիւ փոխւում են, փոխւում են նաև կենդանիները միևնոյն կերպով. կարելի է ոչ միայն նրանց խոշորացնել, այլ և մանր կամ ոսկրեղ դարձնել նայելով նպատակին։ Կարելի չէ՞ մարդս էլ միևնոյն եղանակով հասակաւոր դարձնել։

Դոկտոր Շայրինգերը կարծում է, որ նա լիովին հնարաւոր է, քանի որ [illegible] ծութիւնից, և որովհետեւ ոսկրի գլխաւոր բաղադրիչ մասը կազմում է ֆոսֆորաթթու կիրը, ինչպէս և նեարդային բաղադրիչն է կազմում, ուստի մեծ կարեւորութիւն են ստանում ֆոսֆորաթթու աղերը։ Բայց մեզ յայտնի է, որ հանքային աղերը ուղղակի չեն մարսւում մեր ստամոքսում, այլ հարկաւոր է, որ նրանք բոյսերի հետ միասին ընդունուեն,—բոյսերն իրենց մէջ ծծելով այդ աղերը գետնից, փոփոխում, այնպիսի ձև են տալիս նրանց, որ հնարաւոր են դառնում մարդկանց մարմնակազմի գործածութեան համար։ Շատ հացաբոյսեր իրենց մէջ ունին այդ աղերից, որոնք երկար եփուելուց լուծւում են։ Այդ հիման վրայ էլ դոկտոր Շայրինգերը [illegible] բարակ մաղով քամում է այդ խառնուրդը և վրան այնքան ջուր աւելացնում որ այդ ամենը մի լիտր դառնայ։ Այդ հիւթը կարելի է խառնել կաթի, կոնիակի լիմոնի և այլ նիւթերի հետ դիւրաւ ընդունելի դարձնելու համար։ Նախապէս կենդանիների վրայ փորձելուց յետոյ այդ նիւթը, նա փորձել է նաև մանուկների վրայ և օգտաբեր հետեւանքների հասել։ Սակայն դոկտոր Շայրինգերը անհրաժեշտ պայմանն է դնում, որ այդ հիւթով մանուկներին կերակրելու հետ զուգընթացաբար առաջ պէտք է տանել նաև նրանց ֆիզիքական կրթութեան գործը, նպատակայարմար մարմնամարզութեան շնորհիւ։ Որովհետեւ առանց մարմնամարզութեան այդ նիւթի գործածութիւնը [illegible] հասունութեան հասնելով, բաւական ժամանակ չի ունենայ կանոնաւորապէս աճելու։ Մինչդեռ եթէ այդ հիւթով մանուկներին սնուցանելով հանդերձ նրանց ֆիզիքական աշխատանք անել տանք, այն ժամանակ կըզարգանան նրանց մկաններն ու ոսկրները։

* *

Սակայն ինչպէս ոսկրները, նոյնպէս և մկանները հետզհետէ զարգանալով հասնում են մի կէտի, որից յետոյ յետադարձ շարժումն է սկսւում։ Մկանների զարգացումից կախուած է մարդկանց ույժը, (նոյնը և կենդանիների ամար է). քանի մկանը զարգացած լինի, այնքան էլ մարմնակազմի ույժն ու տոկունութիւնն աւելի կըլինի։ Բայց [illegible] ուժեղ ժամանակն է համարւում։ Փորձերից երեւում է,որ Եւրոպ-ամերիկական ցեղի մարդկանց մկնային ույժը հասնում է 17 տարեկան միջոցին 128 կիլոգրամի 20 տարեկան միջոցին 147 կիլոգրամի 30 տարեկան միջոցին 164,2 կիլոգրամի, որից յետոյ կամաց-կամաց ույժը պակասում է, թէև 40 տարեկան միջոցին դեռ 161 կիլոգրամի ույժ ունի, յեղաշրջումը 50 տարեկանից յետոյ շատ արագ է կատարւում։ Միևնոյն երեւոյթն է նկատւում նաև նեգրերի և մուլատների վերաբերմամբ, մինչդեռ հիւսիսային ամերիկայի հնդիկների մէջ մկանային ույժի ամենաբարձր աստիճանը ոչ թէ 30 տարեկան միջոցին է հասնում, այլ 35—45 տարեկան միջոցին։

Հարց է, թէ նոյնիս քաղաքակրթութիւնը [illegible] ներգործութիւն չէ՞ անում ֆիզիքական կազմուածքի միջոցին։

[illegible]

Հրատ.

եկած թատրոնական շինութիւնները փոքր գտնելով ժողովը խնդրում է ռուս թատրոնական ընկերութեանը կառուցանել նոր թատրոններ և կազմել ժողովրդին յարմար պիեսների ցուցակ։

Գ. գիւղական թատրոն եւ հասարակական զուարճութիւններ։ Այս հարցի մասին ժողովը ցանկալի է համարում, որ գիւղատնտեսական ընկերութիւններ կազմուին գնալու գիւղեր ու գիւղաքաղաքներ ներկայացումներ սարքելու, ձեռներէցութեամբ փոխձուած ռեժիսօրների։ Երկրորդ՝ միջնորդել ռուս թատրոնական ժողովին, որ նա յանձնառու լինի այդպիսի խմբեր կազմելու։ Երրորդ՝ միջնորդել ներքին գործերի պ. մինիստրին, որ տեղական ոստիկանական իշխանութիւնները օգնեն թատրոնի գործին և ոչ թէ աֆիշների ուշ թոյլտուութեամբ աւելի դանդաղեցնեն գործը։ Չորրորդ՝ աչքի առաջ ունենալով բարոյական այն մեծ օգուտը, որ ժողովրդական ընթերցանութիւններից քաղում է հասարակութիւնը մոգական լապտերով ցոյց տրուած պատկերներից աւելի եւս հաւանելով, ժողովը խնդրում է պատշաճաւոր իշխանութիւնից, որ այդպիսի ընթերցանութիւնների թոյլտուութեան իրաւունքն անցնի տեղական ուսումնարանական վարչութիւնների ձեռքը, նահանգապետի գործակցութեամբ։ Հինգերորդ՝ ցանկալի է, որ տօնավաճառական ներկայացումներ կազմակերպելու գործը ազէտների ձեռքից խլուելով յանձնուի գրագէտ մարդկանց, ինչպէս դպրոցական վարիչներին և այլն։ Վերջապէս ցանկալի է, որ տօնավաճառական ներկայացումներ ու բալագանները լինեն աւելի գեղարուեստական։

Դ. Թատրոնի գեղարուեստական եւ կրթական նշանակութեան խնդիրը։ Այս հարցի մասին, որ իսկապէս շատ հետաքրքրական է ամենի համար, ժողովը չորս կէտերից բաղկացած մի որոշման եկաւ, որի գլխաւոր միտքն է լուրջ ռեպերտուար և տաղանդաւոր խաղ։ Ժողովը ցանկալի է համարում, որ ամեն քաղաքում կիրակի օրերը ցերեկով տրուին աշակերտական ներկայացումներ և խաղացուին դասական հեղինակութիւններ (Գրիբոյեդով, Գոգոլ, Օստրովսկի և այլն)։ Աչքի առաջ ունենալով երիտասարդ դասակարգի սէրը դէպի գեղարուեստը, ժողովը ցանկալի է համարում, որ ինչպէս դասարանական առարկայ միջնակարգ դպրոցներում մտցուին և համարձակ կարդալու ու խօսելու փորձեր։ Ժողովը յայտարարում է թատրոնատէրերին աւելի փառահեղ դարձնել թատրոնական բեմերը։

Բացի այս ամենը, ժողովը որոշումներ կայացրեց և մալառոնների խմբի զարգացման խնդրի ու թատէրատէրների ներկայացումների մասին։ Վերջիններիս գործը ժողովը համարում է գեղարուեստին անօգուտ ու նիւթական վնաս դերասաններին։

Այսպիսով շատ խնդիրներ վերջացած էին։ Փակուեց 3-րդ նիստը։

(Վերջը միւս անգամ)

Գօշ.

Մոսկուա, 25 մարտի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

(«Նոր-Դար» ի թղթակցութիւն)

—

ՀԱՅԴԵԼԲԵՐԳ, 15 ապրիլի.—Երկար տարիներից ի վեր Եւրոպայի հայ ուսանողութիւնների և ուսանողների միջև արծարծւում էր «Եւրոպայի հայ ուսանողական միութիւն» առաջ բերելու խնդիրը։ Միութիւնն այս տարի վերջապէս գլուխ եկաւ շնորհիւ Լայպցիգի հայ ուսանողութեան, որ, ձեռնէրէցութիւնն իւր վրայ առնելով, մի քանի ամիս առաջ դիմումներ արեց զանազան համալսարանների և բարձրագոյն դպրոցների մէջ ուսանող հայերին հայ ուսանողների մի ընդհանուր ժողով անելու համար։ Ժողովը կայացաւ Հայդելբերգում ապրիլի 11—15 և տևեց հինգ օր։ Ժողովին ներկայ էին 25 հոգի, որոնցից 24-ը իսկական ուսանող էին, իսկ մէկը դեռ նոր պէտք է ուսանող գրուէր։ Միքանի քաղաքների ուսանողական ընկերութիւններ և խմբեր ուղարկել էին ներկայացուցիչներ։ Եկած էին 11 քաղաքներից. Լայպցիգից 8 հոգի, Բեռլինից 3 հոգի, Եէնայից 2 հոգի, Դրեզդէնից 1 հոգի, Ախէնից 1 հոգի, Միւնխէնից 2 հոգի, Պարիզից 1 հոգի, Նանսիից 1 հոգի, Ժնևից 2 հոգի, Լօզանից 1 հոգի, և Ցիւրիխից 2 հոգի, իսկ մէկն էլ նոր պէտք է Ցիւրիխում ուսանող գրուէր։

Միութիւնը հաստատուեց հետեւեալ նպատակով. Եւրոպայի զանազան քաղաքների մէջ ցրուած հայ ուսանողների միջև մտաւոր շփումն և անձնական ծանօթութիւններ առաջ բերել և ուսանողների մէջ ընդհանուր իդէալներ զարթեցնել միութեան մէջ մտնել կարող են ուսանողական խմբեր և ուսանողներ։ Միութիւնն լաւ կազմուած կանոնադրութեան կունենայ մի կարգադիր յանձնաժողով, որ միութեան կեդրոնը կը հանդիսանայ և որի հետ հաղորդակցութեան մէջ կը լինէին ուսանողական խմբերը և զանազան քաղաքների մէջ ցրուած ուսանողները։ Կարգադիր մասնաժողովը կը հրատարակի տարին երկու անգամ շրջաբերական տեղեկագիր թերթեր, որ բոլոր անդամներին կուղարկուին։ Տեղեկագրի մէջ կը մտնեն ստատիստիկական տեղեկութիւններ Եւրոպայի հայ ուսանողների և ուսանողութիւնների, նրանց գործունէութեան մասին, ինչպէս և ընդհանուր ժողովի որոշումներն և ընդհանուր ուսանողութեան ուղղուած ազգիր։ Միութիւնը կունենայ տարին մի անգամ ընդհանուր ժողով, որին կուղարկեն ուսանողական խմբերը իրենց ներկայացուցիչներին և որին կարող են մասնակցել բոլոր ուսանող անդամները։ Ընդհանուր ժողովի մէջ, բացի ուսանողական միութեանը վերաբերեալ գործերի մասին խորհրդակցութիւնից, կըկարդացուին և հայոց կեանքի հետ որևէ առնչութիւն ունեցող դասախօսութիւններ։

Միութիւնն իրեն հեռու պիտի պահէ գործնական ձեռնարկներից և քաղաքական նպատակներից, զուտ ուսանողական խնդիրներով պիտի պարապի։ Ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն։

***

ՕԴԵՍՍԱ, 27 մարտի.—Նախընթաց նամակս գրեցի, թէ ինչ վիճակի մէջ են այստեղի տաճկահայ գաղթականները [1], այժմ պիտի ծանօթացնեմ «Նոր-Դար» ի ընթերցողներին մի տխուր դէպքի հետ։

Մի գաղթական ընտանիք, որի կեանքը լի է բազմատեսակ դառնութիւններով, բաղկացած էր վեց հոգուց երկու կանանցից, երկու տկար տղամարդկանցից և երկու փոքր երեխաներից։ Դրանք հասան Օդեսսա տարուայ այն ժամանակը, երբ անասունները ու թռչունները անգամ սոսկում էին գլուխները դուրս հանել իրենց թաքստեան տեղերից։ Բայց այդ խեղճ ընտանիքը ստիպուած էր համբերութեամբ դիմադրել բնութեան արհամարհանքներին, սառնամանիքներին։

Հասնելով Օդեսսա, նրանք երկար թափառում էին քաղաքի լայն ու արձակ փողոցներում, անցնում էին հայակապ տների հարիւրաւոր փառաւոր ու ճոխ հիւրանոցների շարքերը, սակայն դրանցից և ոչ մէկը ապաստան չեղաւ անմեղ հալածուած մարդկանց ցուրտ բքաբեր քամիների ուժգին հարուած, քաղցի ու ծարաւի տանջող զգացմունք ահա թափառական պանդխտի բաժինը ճոխ քաղաքում։ Ուր էին գնում իրենք էլ չգիտէին։ Տաք մուշտակների բաղդաւոր պարանոցները գրկող օձիքների մէջ շրջուն պարոններին ու փափկասուն տիկիններին անծանօթ էր տառապեալի վիճակը, նրանք մի արհամարհական հայացքով էին յղնում դէպի իրենց մեկնած ցրտահար ձեռքը և անցնում։ Նրանք հայ էին որոնում, հայկական գիրկ որ գրկէ ու մխիթարէ։ Բայց սառած զգացմունքների այս աշխարհում հեշտ չէ հայ գտնել. իրենց նման մի պանդուխտի խնդրանօք տեղիս հարուստներից մէկը դիջաւ իւր ամարանոցի մէջ մի պատըսպարան տալու։ Խոնաւութիւնից սևացած պատեր, անձրևից ուռած ու չըփակուող լուսամուտներ, գերեզմանի չափ ցան յատակ, ամպերի պէս անձրևող առաստաղ—ահա վեց կենդանի մարդու տխուր բնակարանը։ Մտէք նրա բնակիչների հարստութիւնը տեսէք. գետնի վրայ տարածուած մի կըտոր թաղիք, բարձերի տեղ ծառայող միքանի կտոր փայտ, մի երկու հողէ քրեղան և ուրիշ ոչինչ. գիշերուան ծածկոյթ իրենց հագած ցնցոտիների մնացորդը։

Եղան աչքեր, որ տեսան այս վիճակը, լսուեցաւ մի ձայն այս թշուառութեան բարձման համար, բայց ժամանակիս «տիկնայք փափկասուն հայոց աշխարհի» խուլ ու համր մնացին այս ձայնի առաջ։ Բայց այդ ձայնը ապարդիւն չանցաւ. եղան մարդիկ, որոնք այցելեցին ու խնամեցին թշուառներին, սակայն դա էլ տևական չմնաց, արքայութեան որդիների սարսափն ու բամբասանքները զրկեցին թշուառներին և այդ մխիթարութիւնից։ Նոցա համար մնաց մի բան—խոնաւ բնակարան ու սառն գերեզման։ Հասաւ այդ օրը, տաճկական անգթութիւնից ազատուած մի ծաղիկ արևնակից հայոց, աչքի աղջե թարմեց երկու մանրիկ որբերի մայրը քսանհինգ գարուն հազիւ գլորած քաղցի ցաւով հոգին աւանդեց, քրիստոնէական վերջին թօշակն էլ չառ համարուեցաւ պանդուխտ հայ կնոջ. երեք օր անշարժ մնաց նրա ցրտացած դիակը նոյն բնակարանում։ Առաջնաւոր կուրծքը, որ ցրտից կապտող մանուկների միակ ջերմարանն էր, սառեց և փոքրիկ որբերին, որոնք այն չոր դիակից երեք օր չբաժանուեցան։ Վերջապէս երեք օր անցաւ. եկաւ քահանան ու ողբալի դիակը առանց վերջին հրաժեշտը տալու հայրենի եկեղեցուն, օտար հողերում ամփոփուեցաւ, իւր ցաւերը, իւր կարօտը հետը տանելով օտար աշխարհի. հողը կշտացրեց քաղցից մեռած պանդխտին։ Նրա դիակի մօտ հայ քահանան մոմ չվառեց, հայ սարկաւագը խունկ չծխեց, հայ տիկինը չաղօթեց. մի օտար յոյն կար նրա դիակի մօտ կանգնած, նրա գնած մոմերովն էր լուսաւորում հանգած մարմինը նըրանից աղօտ լոյսի տակ դիակացած կընոջ սառն ճակատի Օդեսայի հայոց անգթութիւնն էր դրոշմուած։

Ո՞վ է մեղաւոր, ո՞վ է պատասխանատու Աստուծոյ և անտէր, անխնամ որբ մանուկների առաջ. ամենքս, բայց ամենից առաջ հոգևոր տէրերը. նրանք տեսնում են ցրտից ու քաղցից անշընչացած մարմիններ, տեսնում են թէ ինչպէս անտէրունջ մնացած որբեր չորանում թառամում են կեանքի մրրկալից փոթորիկների առաջ. բայց այնքան չքացել է նրանց մէջ խղճի և պարտականութեան զգացմունքը, այնքան յափըշտակուած են արծաթի շլացուցիչ փայլով, որ այլ ևս անընդունակ են դարձել կատարելու մի որևիցէ մարդասիրական գործ։ Նրանց աչխոյժն ու աչքերը այն ժամանակն են միայն բացւում, երբ հարկաւոր է լինում մի լաւ գործ կամ մատաղութիւն խնդրելու կամ խանգարելու։ Նրան ոչ թէ չեն մտածում թշուառ գաղթականներին մի ելք գտնելու, այլ ամեն կերպ աշխատում են ի չիք դարձնել։

Այդպիսի հոգևորականներ դեռ պաշտպանութիւն են գտնում թըքախօս ժողովրդից։

Մի քանի պատուաւոր կանայք երևի խրախուսուելով իրենց եկեղեցականների բարի գործերից, ցանկացան արժանաւորապէս... յայտնել իրենց գոհունակութիւնը։ Նրանք վճռեցին մինչև անգամ մուրացկանութիւն անել և այդ փողով նրա բնակարանները փառաւորապէս վերանորոգել. լսում ենք, որ նրանք մեծ աջողութիւն են գտել այդ բարի... ձեռնարկութեան մէջ։ Եթէ չասեմ քամնելի։ գոնէ դատապարտելի է մեր տիկնանց վարմունքը։ Արդարև, եթէ այդ ազնիւ մուրացկանները այնքան բարի են, որ եկեղեցականների բնակարանների համար մինչև անգամ հոգում են, ապա ինչպէս կարողանում են տանել այն հարիւրաւոր թշուառների լաց ու կոծը ինչպէս առանց խղճահարուելու երես են դարձնում այն ողորմելի, հալածանքների ու զրկանքների ճանկերի մէջ հիւծող անպաշտպան արարածներից։

Թո՛ղ աւելի շրջահայեաց լինին մեր տիկինները, որ չի չլինի թէ սխալուեն. փոխանակ անձուր անպատի մէջ թառամող նորատունկ թփերը ջրելու, վերակենդանացնելու, հոգ տանեն հաստաբուն կաղնիներին և գետափում բուսած մշտադալար ուռենիներին...

Արդեօք լսում են մեր յարգելի տիկինները, թէ ինչպէս մի յոյն կին լսելով այն ողորմելի հայ կնոջ մահը, իմանալով նրա որբերի դրութիւնը, գթացել նիւթական նպաստ և հին հանդերձներ է ուղարկել, խոստանալով նաև ամենայն օր կաթ մատակարարել նրա որբացած ծծկեր մանկան։ Գովեստի և երախտագիտութեան արժանի է յոյն կնոջ արարքը։ Գալա՞յ օր, որ ճըշմարիտ գթութեան շունչը այստեղ էլ հնչէ, արդեօք այս թարմ ու անտէր հողաբլուրը ու կիսամեռ անտէր որբերը պիտի առիթ լինեն, որ մեր տիկնանց ճոխ սեղանների փշրանքներից բաժին հանուի թշուառներին, թէ դեռ շատ դալար տունկեր քաղցի ու ծարաւի կարկտից ահրաթափ պիտի լինին. անէծք և նախատինք միայն մեզ բաժին թողնելով։

Դիլ-Բահար։

---

[1] Այս յօդուածը չհրատարակեցինք հրատարակելի։ Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

«Times» լրագրի Պետերբուրգի թըղթակիցը հեռագրում է, որ Ռուսիան պետութիւններին մի շրջաբերական է ուղարկել, որով առաջարկում է նրանց սպասողական դիրքի մէջ մնալ, մինչև որ կռուող կողմերից մէկնումէկը իրենց միջամտութիւնը խնդրի։

Միևնոյն գործի առթիւ «Nord» լրագրի մէջ հետևեալն է հրատարակուած.

«Յունաստանի և Դրան միջև պատահած այժմեան ընդհարումը վաղուց արդէն նախատեսուած էր։ Թէև ընդհանուր խաղաղութեան տեսակէտից և այն կապերի պատճառով, որ կան Յունաստանի և Ռուսիայի միջև։ Ռուսիան խիստ ցաւում է, որ Հելլէն կառավարութեան և Թիւրքիայի մինչև պատերազմ է ծագել, այնուամենայնիւ նա վճռել է չըխառնուել գործին, գոնէ առժամանակ։

«Երբ, առաջին վճռական կռուից յետոյ, պատերազմական դրութիւնը պարզ կորոշուի, այն ժամանակ միայն ինչպէս Ռուսիայի, այնպէս և միւս պետութիւնների համար կըհասնի ժամանակ իրապէս միջամտելու»։

Ինչպէս գերմանական, այնպէս և աւստրիական մամուլը նոյնն է ասում։ Ֆրանսիական մինիստրական խորհուրդը նոյնպէս այն միտքն էր յայտնել, թէ դեռ ևս ժամանակը չէ միջամտելու։

Սակայն այդ կարծիքը յայտնում էին այն ժամանակ, երբ դեռ ևս պատերազմի դրութիւնը անորոշ էր։ Սակայն այժմ, երբ թիւրքերն առան Լարիսան՝ պետութիւնները, երևի կըթողնեն իրենց սպասողական դրութիւնը։

Ինչպէս ֆրանսիական, այնպէս և անգլիական մամուլի մի մասը ձգտում է յոյն-թրքական պատերազմի պատասխանատուութիւնը ձգել Գերմանիայի վրայ։ Գերմանական թերթերը այդ մեղադրանքի դէմ պատասխանում են, որ եթէ պետութիւնները հետևէին Գերմանիայի տուած խորհրդին, որ նա առաջարկում էր ճգնաժամի հենց սկզբից Պիրէյը պաշարել, այն ժամանակ պատերազմի առաջը կառնուէր և այժմ այնքան արիւն չէր թափուել Թեսալիայի դաշտերի վրայ։ Գործն այդ դրութեան հասաւ միմիայն Արևմտեան պետութիւնների և, գլխաւորապէս, Անգլիայի շնորհիւ, Բեռլինի «National Zeitung»-ն ասում է.

«Times»-ը և «Figaro»ն զարմանալ Գերմանիային են մեղաւոր համարում այդ պատերազմի համար։ Փաստերը, որոնք ապացուցանում են, թէ ով էր, որ շարունակ խոչընդոտ էր լինում բանակցութիւնների ընթացքին, թէ ով էր. որ շարունակ խանգարում էր յոյներին խաղաղ միջոցներով զսպելու,—այդ փաստերն արդէն պատմութեանն են պատկանում, որը կեղծել չի աջողել ոչ անգլիական և ոչ ֆրանսիական լրագիրներին։ Անգլիան հասաւ այն բանին որին, ինչպէս ամենալաւ խաղաթղթի, ձգտում էր վերջին քանի տարուայ ընթացքում. նա ուզում էր պատերազմ եւրոպական ցամաքի վրայ, և ահա և գաւ»։

Գերմանական թերթերը հակաճառում են նոյնպէս թըրքասիրութեան վերաբերմամբ Գերմանիայի վրայ բարդած մեղադրանքների դէմ։ Նրանք ի նկատի են կացուցանում, որ եթէ իրենք Թիւրքիային յաղթութիւն են ցանկանում, այն ոչ թէ միայն նրա համար, որ պէտք է «դաս տալ» յոյներին, այլ գըլխաւորապէս, նրա համար, որ եթէ յաղթութիւնը Յունաստանի կողմը լինէր, այնժամանակ դժուար թէ աջողուէր պատերազմը սահմանափակել։ Յոյների յաղթութիւնը սիրտ կըտար մակեդոնացիներին, ալբանացիներին, իսկ յետոյ արդէն դժուար կըլինէր զըսպել նաև Բալկանեան պետութիւններին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

«Neue Freie Presse»-ը Վիլհելմ կայսրի Վեննա և Ֆրանց-Իոսիֆ Կայսրի Պետերբուրգ այցելելու առթիւ ասում է. քաղաքական ամբողջ դրութեան ծանրութեան կեդրոնը ներկայումս գտնւում է Պետերբուրգում։ Վեննայի և Պետերբուրգի այցելութիւնները կապացուցանեն երեք կայսրների հաստատ վճռականութիւնը, որով նրանք թոյլ չեն տալ, որ Բալկանեան թերակղզում այնպիսի բան կատարուի, որից Եւրոպան ստիպուած լինի միջամտել։ Խաղաղութեան ընդհանուր շահը յաղթող կհանդիսանայ պետութիւնների մասնաւոր շահերի դէմ»։

—Աթէնքում համոզուած են, որ յոյները փառաւոր յաղթանակներ են տարել։ Այդ պատճառով ոգևորութիւնն աճում է։ Աթէնքի լրագիրները հաղորդում են, որ Արշիպելագի յոյները նոյնպէս ապստամբել են Թիւրքիայի դէմ և թէ մինչև անգամ Զմիւռնիայում ծանր անկարգութիւններ են տեղի ունեցել։ Յունական նաւատորմղի գործողութեան մասին այդ լրագիրները ոչ մի տեղեկութիւն չեն հաղորդում, բացի Պրեւգայի ռմբակոծութիւնից, բայց ակնարկում են, որ յունական նաւերը պատրաստւում են ներս խուժելու Դարդանէլը և Կ. Պոլիսը ռմբակոծելու։

—«Standare»-ին Կ. Պոլսից հաղորդում են. «Հրատարակուած պաշտօնական տեղեկութիւններից երեւում է. որ Թուրքերը զէնքի տակ ունին 357,000 հոգի, որոնցից 217,000 ը եւրոպական Թիւրքիայումն է»։

—Կանէից «Köln.Zeit»-ին գրում են. «գնդապետ Վասսոսը սպաների ձեռքով մի նամակ ուղարկեց ծովակալներին, որի մէջ յայտարարում է, թէ պատերազմը հրատարակուած լինելու պատճառով, ինքը մտադիր է յարձակում գործել Թուրքաց դիրքերի վրայ և առաջարկում է, որ օտարերկրեայ զօրքերը հեռանան»։

—Լոնդոնից հեռագրում են, որ յոյն ապստամբական խմբեր են հաւաքւում Կանդիի շուրջը։ Կրետէում ապրող եւրոպացիների մէջ այն կարծիքն է տիրում թէ Վասսոսը մտադիր է իրագործել իր սպառնալիքը, որ նա յայտնել էր իտալական հիւպատոսին, այն է՝ յարձակում գործել պետութեանց զօրքերով պահպանուող քաղաքների վրայ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԼՈՆԴՈՆ, 15 ապրիլ.—«Times»-ին հաղորդում են. «ապրիլի 25-ին, առաւօտեան ժամը 7-ին, Լարիսա մտաւ Թուրքաց հեծելազօրը, Պենէոսի մօտ կարճատև կռիւ մղելուց յետոյ։ Լարիսա բերդում խլուած է 6 հատ ծանր և լեռնային 1 թնդանօթ։ Բռնուած են մի քանի գերիներ որոնց թւում սպաներ էլ կան։ Յոյների վրայ բռնութիւններ գործ չեն դրուած։ Յոյները կրակ տուին իրենց տները, շատերը քաղաքից ելին և փախան լեռները։ Նաշիտ բէյը, որ Լարիսայի բերդապահ է նշանակուած խլեց բանկն իր բոլոր կայքերով»։

Աթէնքից «Times»-ին հաղորդում են. «Թուրքերը կանգնած են Վոլոյից մի ժամուայ հեռաւորութեան վրայ։ Յունաց զօրքերը, վիրաւորներին իրենց հետ առնելով, հեռացան քաղաքից»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 ապրիլ.—Յունաստան, պատերազմի դաշտը մեկնեց կարմիր Խաչի ընկերութեան առաջին խումբը, որ բաղկացած է 2 վիրաբոյժից, գթութեան 20 քոյրերից, մի փելչերից և մի տնտեսից։

Կ. ՊՈԼԻՍ.—8 գումարտակ զօրք հրաման ստացաւ Ադրիանապոլսից ճանապարհ ընկնելու դէպի Յունաստանի սահմանը։

ՎԻԵՆՆԱ.—«Neue Freie Presse»-ին Աթէնքից հեռագրում են. «ժողովուրդը կոտրատում է գինավաճառների խանութների դռները և աւարի է մատնում այդ խանութները։ Մինիստրութեան անկումը վճռուած բան է համարւում»։

ԼՈՆԴՈՆ.—Պատգամաւորների ժողովի Կերզոնը հաղորդում է, որ Կրետէից Թրքական զօրքի հեռացման մասին պետութեանց միջև ոչ մի վճիռ չի կայացել։ Պետութիւնները մտադիր չեն եղել գրաւել և չէզոք յայտարարել Յունաստանի մի մասը։ Կրետէի ապստամբները կատարելապէս տեղեակ են, թէ որոնք են զինուորական պաշտպանման սահմանները. Պետութիւնները կըցանկանային, որ կղզին չէզոք մնայ, բայց քրիստոնեաները շարունակ յարձակումների էին ենթարկում քաղաքների մօտ միջազգային զօրքերի բռնած դիրքերը։ Ահա թէ ինչու անհրաժեշտ եղաւ միջոցներ ձեռք առնել պահպանելու ինչպէս զօրքերը, այնպէս և բնակիչներին։

Կ. ՊՈԼԻՍ.—Պաշտօնական տեղեկութիւններից երեւում է, որ Լարիսայի շրջակայքի բնակիչները փախել են, բայց յոյս ունին, որ հրատարակուած յայտարարութեան շնորհիւ վերադառնան։ Մահմեդականների թաղի մի մասն այրուել է։ Թրքական հեծելազօրը հսկում է Վելեստինոսի և Ֆարսալոսի ճանապարհները։

ԲԱԳՈՒ 17 ապրիլ.—Ռոտշիլդի նաւթահորը դադարից արտավիժելուց։ Հրդեհը դադարեց։ Այրուող գազերը վերջնականապէս հանգցրած և թաղուած են հողի տակ։ Հրդեհը հանգցնելիս 26 բանուորներ ոտների վրայ այրուածքներ ստացան։ Վնասը հաշւուած է մօտ 6 միլիոն պուդի։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Տեղի ունեցաւ Գրանտի արձանի հանդիսաւոր բացումը։

Կ. ՊՈԼԻՍ.—«Իկդամի» հեռագրի մէջ հաղորդւում է, որ յունաց զօրքերը և բնակիչների մեծ մասը հեռացել են Թրիկալայից և Վոլոյից (Լարիսայից հարաւ), ուր արդէն հասել է Թուրքաց հեծելազօրը։

Թրքական աղբիւրից հաղորդում են, որ Վասսոսի զօրքերի մէջ կարգապահութեան անկումն է նկատւում. Նրանց և ապստամբների միջև տարաձայնութիւններ են ծագում։

ՓԱՐԻԶ.—Տուլոնից հաղորդում են, որ հետեւակ նոր զօրք և ամբաձիգ գունդ է ուղարկուած Կրետէ։

ԹԵՐ ու ԴԵՄ

Յարգոյ խմբագիր.

Խոնարհաբար խնդրում եմ տեղ շնորհէք «Նոր-Դար»-ի մօտակայ համարներից մէկում հետեւեալ բացատրութիւններս։

«Նոր-Դար»-ի 59-րդ համարում, մի ոմն ծխական, հրաւիրում է հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը ինձ վրայ, ինչպէս «կարգ ու կանոնի» չենթարկուող պարտականութիւն չճանաչող քահանայի։

Ահա ինչ է ասում ծխականը.

...Առանց իշխանութեան թոյլտուութեան զանազան պատրուակներով (յաւելեցէք) ժողովարարութիւններ է անում, իսկ թէ ժողովածը տեղ է հասցնում այդ էլ Աստուած գիտէ, ասում է ծխականը։

Ես իրաւ ժողովարարութիւն եմ արել համաձայն գրութեան գործակալ հօր և փողն հասցրել եմ ըստ պատկանելոյն, որի համար ունիմ փաստեր։

Ծխականը շարունակում է, որ ես խնդիր եմ կազմել յանուն Հայրապետի և դռնէ դուռ ընկած ստորագրութիւններ եմ մուրացել և իրեն կողմից հրահանգ է առաջարկում, որ նման դէպքերում, այդ տեսակ խնդիրները, մերձաւոր իշխանութեան միջոցաւ լինի… բացատրեմ։

Սրանից երեք տարի առաջ, իմ ծխականներից մի քանի պատուաւոր անձինք, դիմում են խնդրագրով նորին բարձր սրբազնութեան և խնդրում որ իմ երկարամեայ քահանայութեան համար վարձատրէ։

Սրբազանը ընդունելով խնդիրը խոստանում է նրանց անպատճառ բաւարարութիւն տալ ինձ. անցնում է մի քանի ամիս ժողովրդականներից մի քանիսը դարձեալ դիմում են սրբազանին իրենց խնդիրը ի կատար ածելու համար և դրական պատասխան են ստանում, որ անպատճառ շուտով կըիրագործուի նրանց խնդիրը բայց մինչև այսօր էլ խնդիրը մնում է անկատար [1]։ Այս քանի օրերս ժողովուրդը յուսահատուելով [2]), դիմում է Նորին Վեհափառութեան, որի մէջ ես մազաչափ մեղաւորութիւն չունիմ և ուշքին էլ չեմ խնդրել, «անպատճառ խնդրատուոյ» լինելու [3])։

Անյայտ ծխականը ասում է թէ, ժամասացութեան ու դրա սկսելու մէջն էլ կատարեալ խառնակութիւն է տիրում և կոնսիստորից ուղարկած յայտարարութիւնը խորանումն է պահւում... Ինձ հետ միայն Տէր-Խաչատուր քահանան, հրաժարեցրած է, Բեթղեհէմի Նորընծայ Աբրահամը, ինչպէս ժամանակաւոր միաբան, որը շաբաթական 3 անգամ է լինում մեր եկեղեցում և բացի այդ, այս քանի օր է համաձայն առաջնորդութեան գործակալ հօր, ես ստիպուած էի մեր եկեղեցում ժամ ասել և Զուգուրէթի եկեղեցում, որի քահանան՝ բացակայ էր Թիֆլիսից ժամանակաւորապէս. ասացէք խնդրեմ, այսպիսի հանգամանքներում, մինթէ մի քանի րոպէ ուշանալը կարող է յանցանք լինել... և վերջապէս ո՞ր եկեղեցումն է կոնսիստորիայից ուղարկած ժամերգութեան թուղթըն պատերից կախած, չէր կարելի ցոյց տալ մի այդ տեսակ դէպք։ Ոչ պ. սուտ ծխական, եկեղեցին թատրոն չէ և ձեր պաշտպանելու կարիք չունի։

Սուտ ծխականը [4]) ասում է, որ երեք տարի է, Վեհ. Հայրապետից հրաման կայ ինձ Չորաքաշի եկեղեցին տեղափոխելու ու զարմանք է յայտնում, թէ ինչու մինչև այժմ այդ հրամանը չէ իրագործւում։

Մեր եկեղեցին միշտ ունեցել է երկու քահանայ, 1893 թ. Տէր Գիւտը նշանակուելով Վանից աւագ եկեղեցում, նրա տեղը Վեհ. Հայրապետի կոնդակով նշանակւում եմ ես Կուկիոյ ս. Աստուածածնայ եկեղեցւոյ միաբան և Խաչատուր քահանայի օգնական, հայր Խաչատուրը բողոքում է Վեհ. Հայրապետին, որ ինքը կարիք չունի օգնականի և իբր թէ ես աւելորդ եմ։ Այդ ժամանակ վախճանւում է Չորաքաշ եկեղեցւոյ միաբան Տէր Յովհաննէս քահանան և Վեհ. Հայրապետն բարեհաճում է կարգադրել կոնսիստորիային, որ ինձ նշանակէ նրա տեղ, եթէ իրաւ մեր եկեղեցին երկրորդ քահանայի կարիք չունի, բայց Չորաքաշ եկեղեցւոյ միաբան Մանդակունի քահանան բողոքում է այդ բանի դէմ ասելով թէ, այն եկեղեցին երկու քահանայ պահել կարող չէ, ուստի առաջնորդը բարեհաճում է կանչել ինձ առեան և հրամայում է մնալ ինձ իմ այժմեան տեղ։ Վերջապէս այսքանս կասեմ, որ ամեն մարդ պարտական է իւր արածի համար հաշիւ տալ, ես պատրաստ եմ հաշիւ տալու, ով ցանկանում է և թող ամեն ոք աչքի առաջ ունենայ, որ եթէ ինքը չտայ, նրանից կըպահանջեն։ Ով որ ականջ ունի լսելու թող լսէ։

Միաբան Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածնայ եկեղեցւոյ՝

Ա. ք. Տէր-Յովհաննէսեանց.

Թիֆլիս, 8 ապրիլի։

---

[1] Տէր հայր, դա հերքում է, թէ մեղադրանք. և ում դէմ էք ուղղում այդ մեղադրանքը։ Խմբ.

[2] Նախանձելի վիճակ է ծխատէր քահանայի վիճակը, որի ծուխը ոչ թէ միայն գլուխ է պատռում իր քահանային վարձատրել տալու համար, այլ և յուսահատւում է տեսնելով, որ իր ծխատէր քահանայի վարձատրութիւնը ուշանում է։ Արժ. քահանան չէ գրում թէ ինչ վարձատրութիւն պիտի ստանար եկեղեցուն մատուցած ծառայութիւնների համար։ Խմբ.

[3] Գովելի համեստութիւն։ Խմբ.

[4] Արժ. տէր հօրը կարող ենք հաւատացնել, որ ծխականը սուտ ծխական չէ։ Նա շատ հին ծխական է, այն ժամանակից էլ շատ առաջ երբ ինքը արժ. հայրը Դուշէթումն էր և պատահմամբ Թիֆլիս չէր տեղափոխուել։ Խմբ.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64, սեպհական տուն)
Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնը երկուշաբթի, չորեքշաբթի ու ուրբաթ օրերը, ժամը 2–4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մասնաւոր ընդունելութիւնը ամենայն օր, ժամը 9—10 առաւօտեան վճարը 2 ր.։ Գինեկօլոգիկ հիւանդները, յղի և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Չունևորները ձրի են։ Գինեկօլոգիայի բաժանմունքը մտնողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 2 ր. մի օրուգիշերուայ համար, Ծննդաբերական բաժանմունքը մտնողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր. Անդամատութիւնները համաձայնութեամբ։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Չունևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, որ տեղաւորւում են նրանք տեսչի և որա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
100—13 Մ. ՄԿՐՏՉԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
Երեքշաբթի, ապրիլի 22-ին 1897 թ.
ՅՕԳՈՒՏ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ.
ՀԱՅ ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐԸ
կըներկայացնեն
I.
ԱՐԻ ԲԱԺԱՆՈՒԵՆՔ
Կոմեդիա 3 արար. գործ. Վ. Ալէքսանդրովի, թարգ. Զիգիանեանի
Դերակատարներն՝ Վ. Գ. Մամիկոնեան, Մ. Գ. Իսմիրեան, Պ. Ա. Բալանթարեան (Արաքսեան), Ա. Մ. Մանդինեան, Ն. Ի. Եմինեան, Պ. Մ. Գուլուխանեան, Լ. Ս. Ծովինեան, Ն. Բ. Մելիք-Փարսադանեան, Գ. Կ. Խրդանեան, Օ. Մ. Պալուխանեան։
II.
ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ
Վոդեվիլ 1 արար. Չեխովի թարգ. Աւետեանի
Դերակատարներն՝ Իշխ. Ս. Արղութեան, Օ. Եմինեան, Ս. Փիրումեան, Ի. Ազամխրդեան, Ե. Բաղինեան։
Սկիզբն է 8 ժամին։
2—1.

ԿԱՐԵՒՈՐ Է ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ
Ի բացակայութեան սովորեցնում եմ կար ու ձև նամակ-պատասխանութեանց միջոցով, նորագոյն, ամենադիւրին և ամենքին հասկանալի մեթոդով։ ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒՄ ԵՄ ԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։ Դասընթացը վերջանալուց յետոյ վկայագիր եմ տալիս։ Պայմանները ու ծրագիրն ուղարկւում են 2 ր. ի։ Դասատու Ե. Գ. Աշմարինա,
Кіевъ, Б. Житомірская, д. № 4.
(М.) 24408. 10—6.

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ
ԳՐԻՄՕ և ԸՆԿ. ՄԱՏԻԿՕՅԻՑ
(Capsules au Matico)
Դեղագործներ Պարիզում.—Թոյլատրուած Ռուսիայում.
Այս կապսուլները պատրաստուած են Մատիկոյի և Կոպայ-բալզամի էսսենցիայից։ Նրանք զտնւում են ստամոքսի մաշկի մէջ, ուստի ոչ վատ համ ունին, ոչ հոտ։
Պահեստները Ռուսիայի գլխ. դեղատներում.
(M) №27625. 11—3

КАКАО
БЕЗЪ МАСЛА
ЗДОРОВЫЙ
ПИТАТЕЛЬНЫЙ
НАПИТОКЪ
МИНУТНОЕ ПРИГОТОВЛЕНІЕ
100 ЧАШЕКЪ ИЗЪ ФУНТА.
С. СІУ и Ко.
(М.) 52—18

„Грѣхи Молодости“
ПОУЧИТЕЛЬНОЕ СЛОВО КО ВСѢМЪ, РАЗСТРОИВШИМЪ СВОЮ НЕРВНУЮ СИСТЕМУ ОНАНИЗМОМЪ И РАСПУТСТВОМЪ.
Соч. Д-ра ЛОРЕНЦЪ.
Русское изданіе Д-ра Б—а.
цѣна 1 руб.
Эта полезная книга содержитъ множество совѣтовъ, какъ избавиться страдающимъ отъ вредныхъ послѣдствій вышеозначенныхъ пороковъ и возстановить разстроенныя силы и здоровье. Книга эта разрѣшена Москов. Цензурнымъ Комитетомъ.
Складъ изданія только у ОТТО АСПЕРГЕРА ВЪ ЛЕЙПЦИГѢ (Саксонія). Иногородные за почтов. пересылку не платятъ.
(М.) 18—15

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնել որ ամսոյս 20-ին նոր կիւրակէի օրը Վանից Մայր եկեղեցում կատարուելու է դպրոցի բարերար
ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆՑԻ
(753) հոգեհանգիստը։ 1—1

ՅԱՅՏՆԻ ԵԼ ՉԷ ԴԷՄՔԻ ՎՐԱՅ ՄԻԱՅՆ
„ՀԻԳԻԵՆԱ“ ՊՈՒԴՐԸ
ՍՔԱՆՉԵԼԻ ՀՈՏՈՎ.
Գլխաւոր պահեստները.
С.-ПЕТЕРБУРГЪ площ. Александр. театра 9. МОСКВА, ВАРШАВА
„ՀԻԳԻԵՆԱ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ“
(М.) №44011 14—9

ԳԻՆԻՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
է բացւած Թիֆլիսի քաղաքի 5-րդ քաղաքամասում, Պուշկինսկայա փողոցում, Սունդուկեանցի №10 տան մէջ, վրացի սեմինարիայի դիմաց։
Վաճառւում են ամենաչափաւոր գներով։
(451) Բառն տարուայ գինեվաճառ ԱՍԼԱՆ ԷՄԻԼԽԱՆՈՎԻՑ ՏՈՒՆԷԻ 3—2

Доз. цензурою Тифлисъ 18-го Апрѣля 1897 г. Տպարան Ա. Մելիք Ջահնազարեանցի Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рѣгер